

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

*2902 «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ»*

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

1.

III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՊԼԱՆԸ

Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների						
	Քնն.	Ստուգարք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն				2-րդ կուրս		3-կուրս		4 կուրս		
				Ընդ.	Այդ թվում			3-րդ կիս ամյակ, 16 շաբաթ	4-րդ կիս ամյակ 17 շաբաթ	5-րդ կիս ամյակ 12 շաբաթ	6-րդ կիս ամյակ 12 շաբաթ	7-րդ կիս ամյակ ,12 շաբաթ	8-րդ կիս ամյակ ,10 շաբաթ	
					Տեսակ. ուսուց ում	Լաբոր. և գործ. աշխ.	Սեմին. պարապմունք							
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ, ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ														
Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3,4տ		72	54	18		36	36					
Տնտեսագիտության հիմունքներ		6տ		54	44	10					54			
Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		4տ		54	48		6		54					
Իրավունքի հիմունքներ		5տ		36	28	8				36				
Պատմություն		4տ		54	48		6		54					
Ռուսաց լեզու		3,4տ		72	10	62		34	38					
Օտար լեզու		3,4տ		72	14	58		34	38					
Ֆիզիկական կուլտուրա		3-7,8տ		158	6	152		32	34	24	24	24	20	
Էկոլոգիայի հիմունքներ		4տ		36	30	6			36					
Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		3տ		18	18			18						
ԸՆԴՀԱՄԵՆԸ				626	300	314	12	154	290	60	78	24	20	
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ														
Հաղորդակցություն		3տ		36	10	26		36						
Անվտանգություն և առաջին օգնություն		4տ		36	20	16			36					

Աշխատանքային գործունեության ընդհանուր հիմունքներ	3տ	54	24	30	54				
Համակարգչային օպերատորություն	3տ	72	18	54	72				
ԸՆԴԱՍԵՆԸ		198	72	126	162	36			
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ									
ճարտարագիտական գրաֆիկա: Պրոյեկցիաներ և հատույթներ	3տ	72	16	56	72				
Տեխնիկական մեխանիկայի ուսումնասիրման առարկան, մեթոդները, խնդիրները	3տ,4տ	72	36	36	36	36			
Էլեկտրատեխնիկայի և էլեկտրոնիկայի գործնական ընթացակարգերը	4տ,5տ	90	42	48		36	54		
Շինարարական նյութեր և իրեր	3տ,4տ	108	42	66		54	54		
ճարտարագիտական երկրաբանություն	3տ	72	48	24		72			
Գեոդեզիական (երկրաբաշխական) հիմունքներ	4տ	72	24	48			72		
Շինարարական մեքենաներ և փոքր մեքենայացման միջոցներ	5տ	72	30	42				72	
Շինարարության տնտեսագիտություն	5տ	72	36	36				72	
Մենեջմենթ և շինարարություն	6տ	54	36	18					54
Տեղեկատվական տեխնոլոգիաներ մասնագիտական գործունեությունում և նախագծման ավտոմատացում	5տ	54	6	48				54	
Մասնագիտական գործունեության իրավական հիմքերը	6տ	54	42	12					54
Աշխատանքի պաշտպանություն	6տ,7տ	72	48	24				36	36
Զափագիտություն, ստանդարտացում	6տ,7տ	72	36	36				36	36

,սերտիֆիկացում													
ԸՆԴԱՄԵՆԸ				936	442	494		234	198	252	180	72	
ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ													
Շենքերի և կառույցների ճարտարապետություն		4տ,5տ	5տ	108	36	72			54	54			
Շինարարական կոնստրուկցիաներ		5տ,6տ		108	48	60				54	54		
Շինարարության տեխնոլոգիա		6,7տ	6տ	108	40	68					54	54	
Շինարարական արտադրության կազմակերպում		7տ		72	24	48						72	
ճարտարագիտական ցանցեր և տարածքների բարեկարգում		7տ,8տ		108	42	66						36	72
Շենքերի և կառույցների շահագործում		7տ		72	42	30						72	
Սեյսմակայուն շինարարություն		7տ,8տ		72	42	30						36	36
Շենքերի և կառույցների տեխնիկական վիճակի ախտորոշում		8տ		72	36	36							72
Շենքերի և կառույցների վերակառուցում և վերականգնում		8տ		72	32	40							72
Հակակոռոզիոն պաշտպանիչ համակարգեր շինարարությունում		8տ		54	26	28						28	26
ԸՆԴԱՄԵՆԸ				846	368	478			54	108	108	298	278
ԸՆՏՐՈՎԻ		6տ,7տ		108							36	36	36
ՊԱՀՈՒՏԱՑՅՈՒՆ ԺԱՄԵՐ				130				26	34	12	30	2	26
ԸՆԴԱՄԵՆԸ				2844				576	612	432	432	432	360
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				300									
								36	36	36	36	36	36

IV.ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ			N	VII. ԱՆՅՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ, ԱՐՅԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
Տարիքային հոգեբանություն				ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
Ընտանեկան հարաբերություններ			1	Համակարգչային գրաֆիկայի
Վարվելակերպը գործարար հարաբերություններում			2	Ճարտարագիտական երկրաբանության և գեոդեզիայի
V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	3	Շինարարական տեխնոլոգիայի և կազմակերպման
Ուսումնական	3	2		ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
Ուսումնական	4	4	1	Էկոլոգիայի և կենսագործունեության անվտանգության
Ուսումնական	5	6	2	Շինարարական նյութերի
Ուսումնական	6	9	3	Տեխնիկական մեխանիկայի և շինարարական կոնստրուկցիաների
Ուսումնական	7	6		ԱՐՅԵՍՏԱՆՈՑՆԵՐ
Մասնագիտական	8	6	1	Քարային աշխատանքների
Նախաավարտական	8	3	2	Հյուսն-ատաղձագործական աշխատանքների
ԸՆԴԱՄԵՆԸ		36	3	Ծեփագործական և ներկարարական աշխատանքների
				ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
			1	Մարզադահլիճ
			2	Մարզահրապարակ
VI. ՈՒՄՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ				
Երկու համալիր քննություն հատու մասնագիտությունների մոդուլներից / հունիսի 22-ից հուլիսի 5-ը/				

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է թափանցել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:

3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:

4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:

5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:

6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:

7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:

8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:

9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:

10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:

11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԶԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝ ԱՅ –Յ – 5 -11 – 001

Մոդուլի նպատակը՝

Մոդուլի նպատակն է զարգացնել սովորողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:

Մոդուլի տևողությունը՝ 36 ժամ

տեսական ուսուցում՝ 10 ժամ,

գործնական աշխատանք՝ 26 ժամ :

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները՝ Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական իրականացման համար,
2. կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը,
3. կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը,
4. ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում,
5. խթանի համագործակցության ձևավորումը, շարունակական գործընկերության համար ստեղծի նախապայմաններ:

Գնահատման կարգը՝ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում հաղորդակցության անհրաժեշտությունն անձի ինքնադրսևորման և գործարար հաղորդությունների համար,
- բ. ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցության ձևերը / բաղադրիչները /,
- գ. ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները /բաղադրիչները/,
- դ. շփման հնարավորությունն ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,
- ե. անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անձնական հաղորդակցման և շփման ձևերի, գործնական հաղորդակցման եղանակների ու դրանց բաղադրիչների վերաբերյալ: Կառաջադրվեն իրավիճակային խնդիրներ՝ նպատակային հաղորդակցման

հնարավորությունները բացահայտելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը և թեստերը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:
Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և առաջադրված իրավիճակում օգտագործում հնարավորությունները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված հարցաշարեր, իրավիճակային խնդիրներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 2 ժամ
գործնական աշխատանք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,
- բ. բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց / արձանագրում է հարցադրումներ,
- գ. հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,
- դ. ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,
- ե. մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր ուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, հանձնարարվում է որոշակի թեմայի շուրջ զեկույց և հաղորդում պատրաստել, առաջադրվում են թեմատիկ քննարկումներ, որոնց ընթացքում ուսանողը հանդես է գալիս հնարավոր բոլոր դրսևորումներով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը և թեստերը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, խոսքը կառուցում է հստակ և նպատակային, կարողանում է արձագանքել ըստ իրավիճակի:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված

քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- տեսական ուսուցում` 2 ժամ
- գործնական աշխատանք` 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կիրառելի անուղղակի հաղորդակցման ձևերը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,
- բ. կազմում և ձևակերպում է գրավոր խոսք` պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,
- գ. օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները` նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,
- դ. կազմում է գրություններ ըստ հասցեատիրոջ և նպատակի,
- ե. վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,
- զ. բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,
- է. գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և իրավիճակային առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անուղղակի հաղորդակցման ձևերի վերաբերյալ, կհանձնարարվի որոշակի թեմայի շուրջ կազմել տեքստ` հաշվի առնելով հասցեատիրոջը, կառաջադրվի թեմա, որի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքագրվում, ամբողջացվում և փոխանցվում է տեղեկատվությունը, կհանձնարարվի բանավոր հակիրճ միտքը վերածել գրավոր ամբողջական տեքստի, իսկ ամբողջական ծավալուն տեքստից առանձնացնել առաջնային ինֆորմացիան և ներկայացնել հակիրճ խոսքով: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը և թեստերը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում` ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և 80% ճշգրտությամբ կատարում հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- տեսական ուսուցում` 2 ժամ
- գործնական աշխատանք` 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հասցեատիրոջ,
- բ. ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,
- գ. առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,
- դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու ու շահադրդելու համար,
- ե. ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,
- զ. պահպանում և եզրափակում է երկխոսությունը,
- է. կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Ուսանողին կհանձնարարվեն գործնական աշխատանքներ որոշակի տեղեկատվություն ստանալու, մշակելու և դասակարգելու համար: Կառաջադրվեն իրավիճակային խաղեր՝ անձնական շփում նախաձեռնելու, երկխոսության կողմ լինելու, զրույցը պահպանելու և եզրափակելու կարողությունները դիտարկելու, գնահատելու համար: Նույն առաջադրանքը կհանձնարարվի աշխատանքային շփումների համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը և թեստերը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 2 ժամ

գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ներկայացնում է համագործակցության խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),
- բ. հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,
- գ. հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,
- դ. օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,
- ե. հաղորդակցության ընթացքում ձեռք է բերում վստահություն,
- զ. ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական աշխատանքների և իրավիճակային խաղերի միջոցով: Թեստերի միջոցով ստուգվում է համագործակցությունը խթանող միջոցառումների իմացությունը, և կոնկրետ դեպքերի համար դրանց կիրառման առավել նպաստավոր տարբերակները: Կհանձնարարվի հավաքագրել որոշակի գործընկերոջ վերաբերյալ տեղեկատվություն և օգտագործել գործարար հաղորդակցում ձևավորելու համար: Կառաջադրվեն իրավիճակային խաղեր՝ գործնական հաղորդակցում նախաձեռնելու, համագործակցության հասնելու և հետադարձ կապ ապահովելու համար: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը , թեստերը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում՝ ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարում հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված քննարկման ենթակա թեմաներ, դերային խաղերի սցենարներ, հաղորդակցման տեխնիկական սարքեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- տեսական ուսուցում՝ 2 ժամ
- գործնական աշխատանք՝ 4 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝ ԱՅ –ԱԱՕ – 5 -11 – 001
 Մոդուլի նպատակը՝

Սովորողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը` 36 ժամ

Տեսական ուսուցում` 20 ժամ

Գործնական պարապմունք` 16 ժամ

Մուտքային պահանջները` Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները` Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. ներկայացնի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները,
2. կազմակերպի կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան,
3. կանխի հավանական վտանգները և վթարները, իրականացնի անվտանգության միջոցառումներ,
4. ցուցաբերի առաջին օգնություն:

Գնահատման կարգը` Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,
- բ. ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների պահանջները,
- գ. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,
- դ. ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,
- ե. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,
- զ. ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր անվտանգության հիմնական կանոնների, պահպանման

անհրաժեշտության և չպահպանելու դեպքում դրանց հետևանքների վերաբերյալ: Կհանձնարարվի որոշակի բնագավառի (աշխատավայրի) համար ներկայացնել անվտանգության կանոնների առանձնահատկությունները, համեմատել առնվազն երկու բնագավառ:

Ստորև ներկայացվում են արդյունքի ուսուցման ծրագրային մանրամասները`

1. անվտանգության հիմնական կանոնները` ըստ տարբեր մասնագիտական աշխատանքների,
2. տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,
3. հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,
4. էլեկտրաանվտանգության կանոնները, դրանց խախտման հետևանքները, պատասխանատվությունը,
5. կենցաղային հիմնական սարքերի անվտանգության կանոնները:

Արդյունքների ձեռքբերումը բավարար է , եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում` 6 ժամ
գործնական աշխատանք` 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական , սոցիալական-հոգեբանական),
- բ. ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիմա, ճառագայթում, լուսավորվածություն, տատանումներ և այլն),
- գ. ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,
- դ. ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:

ԳՆԱՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի , թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատունակության վրա ազդող գործոնների, սանիտարահիգիենիկ նորմերի և դրանց պահպանման պահանջների

վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի, կոնկրետ իրավիճակից բխող սանիտարիայի և հիգիենայի պահպանման, ինչպես նաև անհրաժեշտ աշխատանքային կամ կենցաղային նյութերի անվնաս օգտագործմանն ուղղված միջոցառումներ:

Արդյունքների ձեռքբերումը բավարար է , եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում` 4 ժամ

գործնական աշխատանք` 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,

բ. ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,

գ. ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձիք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,

դ. ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի , թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառների ու հետևանքների, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Կհանձնարարվի ներկայացնել որոշակի խմբերի համար սահմանված աշխատանքային պայմանների ապահովման և կոնկրետ կենցաղային վթարի կամ պատահարի համար ներկայացնել փաստաթղթային ձևակերպումների բաղադրիչները:

Արդյունքների ձեռքբերումը բավարար է , եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում հանձնարարությունները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում` 4 ժամ

գործնական աշխատանք` 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ցուցաբերել առաջին օգնություն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,
- բ. ճիշտ է ներկայացնում առաջին օգնության գործողությունների քայլերը ,
- գ. կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,
- դ. կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,
- ե. կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,
- զ. կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն տարբեր կոտրվածքների դեպքերում,
- է. ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի , թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր առաջին օգնության հիմնական կանոնների և գործողությունների վերաբերյալ: Կհանձնարարվի ցուցաբերել (անհարինության դեպքում`նկարագրել) առաջին օգնության գործողություններ` ըստ դեպքերի: Արդյունքի գնահատման որոշակի քայլեր (մասնավորապես հարց ու պատասխանը , թեստերը) նպատակահարմար է կիրառել արդյունքի ուսուցման ընթացքում` ելնելով առաջացած ընթացիկ իրավիճակներից:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ անվտանգության կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր, մշակված թեմաներ և իրավիճակային խնդիրներ, առաջին օգնության համար անհրաժեշտ միջոցներ, նյութեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում` 6 ժամ

գործնական աշխատանք` 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Մոդուլի դասիչը` ԱՅ –ԱԳՅ – 5 -11 – 001

Մոդուլի նպատակը`

Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու կարողությունների, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:

Մոդուլի տևողությունը` 54 ժամ

տեսական ուսուցում` 24 ժամ,

գործնական աշխատանք` 30 ժամ :

Մուտքային պահանջները` Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները` Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է կարողանա`

1. փնտրել և գտնել աշխատանք,
2. հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ,
- 3.արդյունավետ աշխատել թիմում` պահպանելով էթիկայի նորմերը,
4. ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները:

Գնահատման կարգը` Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Փնտրել և գտնել աշխատանք

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա.ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները,

բ. կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան / ուսումնասիրել և ընտրել հավանական աշխատատեղ(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները,

գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV),

դ. ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը,

ե. ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի , թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային իրավահարաբերությունների ծագման հիմքերի , կողմերի իրավունքների և պարտականությունների , պայմանագրային հարաբերություններ ձևավորելու նախապայմանների, աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերի վերաբերյալ: Կհանձնարարվի փնտրել ուսանողի ապագա որակավորմանը համապատասխան հավանական աշխատատեղ(եր)՝ օգտվելով տարբեր բազաներից, վերլուծել հավաքագրված տվյալները և պլանավորել աշխատանքի ընդունվելու իր գործողությունները: Կառաջադրվի դերային խաղ , որի ընթացքում ուսանողը կկազմի ինքնակենսագրություն (CV) և կներկայացնի իր մասնագիտական ուժեղ կողմերը, կարող է հիմնավորել և լինել հանոգիչ՝ տվյալ աշխատատեղում իր համապատասխանության հարցում:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում է բոլոր հանձնարարությունները և առաջադրանքները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների վերաբերյալ նորմատիվ ակտեր (աշխատանքային օրենսգիրք, պայմանագրեր և այլն) , տեղեկատվական բազաներ (համակարգիչ , բուկլետներ և այլն) , մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 6 ժամ

գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները,

բ. հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,

գ. ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,

դ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ,

ե. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային կարգապահության, աշխատավայրի կառուցվածքի և ստորաբաժանումների, աշխատավայրի տեխնիկական պայմանների և աշխատանքային գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող այլ պահանջների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում «նորանշանակ աշխատողը» պետք է կարողանա ցուցաբերել արդյունավետ հաղորդակցման կարողություն, շփվել գործընկերային միջավայրում, հաղթահարել տարբեր տրամադրվածություններ, որով հնարավոր կլինի գնահատել նոր աշխատակցի պատրաստակամությունը և պատասխանատվության զգացումը: Նշված իրավիճակում դիտարկվում է նաև ուսանողի ուշադիր լսելու և հասկանալու կարողությունները:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքային իրավահարաբերությունների և կանոնների վերաբերյալ նորմատիվ ակտեր, մասնագիտական գրականություն, նյութեր և իրավիճակային խնդիրներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում` 6 ժամ

գործնական աշխատանք` 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Արդյունավետ աշխատել թիմում` պահպանելով էթիկայի նորմերը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,

բ. ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,

գ. դրսևորում է հարգալից վերաբերմունք գործընկերների նկատմամբ ըստ նրանց վարքագծի դրսևորման,

- դ. առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,
- ե. կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի , թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր կազմակերպության և թիմային նպատակի սահմանման , թիմային աշխատանքի հիմնական սկզբունքների և խնդիրների լուծման մեթոդների վերաբերյալ: Կստեղծվի աշխատանքային պայմանական իրավիճակ, որի ընթացքում ուսանողը , որպես աշխատակից, պետք է կողմնորոշվի աշխատանքային պարզ հարաբերություններում առաջացած բարեկամական կամ վիճահարույց իրավիճակներում` պահպանելով պատշաճությունը և հարգալից տոնը: Կառաջադրվի դերային խաղ, որի ընթացքում գործընկերների վարքագծերի տարբեր դրսևորումների պայմաններում ուսանողն առաջադրում է թիմային շահից ելնող լուծումներ : Վարքագծային դրսևորումների օրինակներ կարող են հանդիսանալ անձնական անհարգալից վերաբերմունքը , աշխատանքային պարտականությունների կատարման թերացումները կամ անտարբերությունը, անձնական հատկանիշների գերադրում կամ ստորադասում, թիմային զգացողության բացասական գերակայությունը և այլն:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է , եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին և կատարում բոլոր հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված նյութեր և իրավիճակային խնդիրներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- տեսական ուսուցում` 6 ժամ
- գործնական աշխատանք` 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,
- բ. բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,
- գ. բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,

դ. ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքային գործունեության ընթացքում կարգապահության, պատասխանատվության, մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման, նախաձեռնողականության և նպատակասլացության, ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորության վերաբերյալ: Վարվելակերպի նշված կետերի կարևորության ընկալումը կդիտարկվի ուսանողի մոտ նաև գործնականում՝ ուսուցման գործընթացում: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում հարցերին, կատարում բոլոր հանձնարարությունները և դրսևորում է պատասխանատու վերաբերմունք ուսուցման գործընթացի նկատմամբ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, մշակված նյութեր և իրավիճակային խնդիրներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 6 ժամ

գործնական աշխատանք՝ 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝ ԱՅ –ՅՕ – 5 -11 – 001

Մոդուլի նպատակը՝ Ձարգացնել սովորողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Microsoft Office) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները:

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ

Տեսական ուսուցում՝ 18 ժամ

Գործնական պարապմունք՝ 54 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ուսումնառության արդյունքները՝ Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է.

1. տիրապետի համակարգչային տեխնիկային և կիրառի օպերացիոն համակարգը,

2. խմբագրի և ֆորմատավորի տեքստերը ,
3. պատրաստի և խմբագրի աղյուսակները,
4. կատարի գրաֆիկական խմբագրում և նկարազարդում,
5. կազմակերպի ցուցադրություն համակարգչային ծրագրերով,
6. աշխատի համացանցում:

Գնահատման կարգը` Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Համակարգչային տեխնիկայի տիրապետում և օպերացիոն համակարգերի կիրառում
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- ա. տիրապետում է համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչներին,
- բ. տիրապետում է միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմաններին,
- գ. տիրապետում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերին (printer, scanner , projector, fax , պատճենահանման սարք և այլն),
- դ. ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,
- ե. ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը (Microsoft office),
- զ. կարողանում է բացել առաջադրված թղթապանակը և ֆայլը,
- է. օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,
- ը. ստեղծում է նոր թղթապանակ և ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում առաջադրված վայրում,
- թ. կատարում է առաջադրված փաստաթղթի տպագրում (Print) :

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի , թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, դրանց կիրառման և նշանակության մասին: Կհանձնարարվի միացնել համակարգիչը և դրան կից օժանդակ տեխնիկական սարքերը, օգտագործել ծրագրային հնարավորությունները ` համաձայն առաջադրանքի: Ուսանողին կառաջադրվեն հետևյալ գործողությունները . թղթապանակ և ֆայլ բացելու, պատուհանային մենյուի հիմնական հրամաններից օգտվելու, ստեղծված ֆայլը պահպանելու, փակելու, առաջադրված վայրում տեղադրելու և տպագրելու գործողություն:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր, համակարգչային օժանդակ սարքեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 2 ժամ
գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Տեքստերի խմբագրում և ֆորմատավորում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. կարողանում է ծրագրերը պատրաստել հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,
- բ. մուտքագրում է տեքստ (մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններներ),
- գ. կարողանում է տեղաշարժել տեքստային ցուցիչը՝ տեքստի մեջ կատարելով ուղղումներ, ջնջումներ, լրացումներ,
- դ. կատարում է մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում՝ փոխելով տողերի դասավորությունը, միջտառային տարածությունները, տեքստի գունային ֆոնը, պարբերության խորությունները լուսանցքներից,
- ե. կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ և այլն:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի տեքստեր մուտքագրելու, ձևավորելու, խմբագրելու, տեքստը հավելելու գործողություններ: Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 4 ժամ
գործնական աշխատանք՝ 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Աղյուսակների պատրաստում և խմբագրում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ներկայացնում է աղյուսակներ կազմելու համապատասխան ծրագրերը և նախապատրաստում դրանք,
- բ. կազմում է աղյուսակ առաջադրված չափերով և մուտքագրում տվյալներ,
- գ. կատարում է ուղղումներ և լրացումներ աղյուսակում (տվյալներ, տողեր, սյունակներ և այլն),
- դ. փնտրում և գտնում է տվյալներ աղյուսակում,

ե. ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն տվյալների միջև:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի աղյուսակ կազմելու, ձևավորելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, աղյուսակային տվյալները հավելելու և տվյալների ֆունկցիոնալ կախվածություն ստեղծելու գործողություններ: Ֆունկցիոնալ կախվածության օրինակ կարող է հանդիսանալ թվաբանական գործողությունների ամփոփումը, վերափոխումը (օրինակ՝ տոկոսի վերածելը) և այլն :

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր :

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 4 ժամ

գործնական աշխատանք՝ 10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Գրաֆիկական խմբագրում և նկարագրողում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ,
- բ. գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով Autoshapes պատուհանի պատրաստի ձևերը,
- գ. գծագրում է կանոնավոր պատկերներ,
- դ. ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,
- ե. խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,
- զ. գծագրում է տեքստային բլոկներ,
- է. կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի նախապատրաստել ծրագիրը՝ ըստ առաջադրանքի գրաֆիկական օբյեկտներ , կանոնավոր պատկերներ, տեքստային բլոկներ գծագրելու, խմբագրելու, տվյալներ մուտքագրելու, խմբավորելու, ձևավորելու գործողություններ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր :

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Ցուցադրության կազմակերպում համակարգչային ծրագրերով

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ներկայացնում է ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը,
- բ. մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,
- գ. ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,
- դ. կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,
- ե. ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ՝ օգտվելով պատուհանային կառուցվածքից նախապատրաստել ցուցադրական ծրագիրը՝ թվային և տեքստային տվյալներ մուտքագրելու, խմբագրելու, նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, աղյուսակային և գրաֆիկական տվյալներ ներբեռնելու, ձևավորելու գործողություններ: Կառաջադրվի ազատ թեմայի ներկայացման համար պատրաստել ցուցադրություն և ներկայացնել ՝ պահպանելով թեմայի տրամաբանական կապն ու հաջորդականությունը : Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր :

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում՝ 4 ժամ

գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Աշխատել համացանցում

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ներկայացնում է «համացանց» հասկացությունը,
- բ. օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,
- գ. ներկայացնում է Histoty, Favorites, Stop, Refresh հրամանների, Back և Forfard կոճակների նշանակությունը,

դ. փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),

ե. կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,

զ. գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,

է. օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները , ուղարկում և ստանում է տեղեկատվություն (հաղորդագրություն, նամակ, կցորդ):

ԳՆԱՂԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կհանձնարարվի ներկայացնել համացանցի կառուցվածք, օգտագործման նպատակների բազմազանությունը, համացանցի միջոցով կարգավորման ենթակա հնարավոր հարցերը : Ուսանողին կհանձնարարվի մուտք գործել ինտերնետային ծրագիր, փնտրել առաջադրված տվյալները, ներբեռնել , օգտագործել և պահպանել տվյալներ: Կառաջադրվի որոշակի տեղեկատվություն փոխանցել սոցիալական կայքերի միջոցով կամ բաշխել ըստ հասցեականության:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ուսումնառության ընթացքում կիրառվում են տեսական և գործնական ուսուցման եղանակները: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական գրականություն, համակարգիչ և համապատասխան ծրագրեր :

ՌԵՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

տեսական ուսուցում` 4 ժամ

գործնական աշխատանք` 10 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԾԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ : ՊՐՈՅԵԿՏԻՎՆԵՐ ԵՎ ՀԱՏՈՒՅԹՆԵՐ »

Մոդուլի դասիչը` ՇԿՇ 5-11 – 001

Մոդուլի նպատակը`

Մոդուլը նպատակն է` ուսանողի մոտ ձևավորել պրոյեկցիոն և շինարարական գծագրեր կազմելու և կարգալու կարողություններ և հմտություններ:

Մոդուլի տևողությունը` 72 ժամ

Տեսական ուսուցում` 16 ժամ

Գործնական պարապմունք` 56 ժամ

Մուտքային պահանջները` Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ոսումնառության արդյունքները` Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք կարողանա`

1. ներկայացնել պրոյեկցիաների մեթոդը և Մոնժի էպյուրը,
2. ներկայացնել աքսոնոմետրական պրոյեկցիաները,
3. ներկայացնել երկրաչափական մարմինների հատույթները,
4. ներկայացնել շինարարական գծագրության տարրերը:

Գնահատման կարգը` Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել պրոյեկցիաների մեթոդը և Մոնժի էպյուրը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում պրոյեկցիաների առաջացումը, դրանց պրոյեկտման եղանակները և տեսակները,
- բ. ճիշտ է ներկայացնում կոմպլեքսային գծագիրը,
- գ. ճիշտ է բացատրում Մոնժի էպյուրը,
- դ. ճիշտ է կատարում հատվածի պրոյեկտումը` պահպանելով տարածության մեջ կետի և ուղիղ գծի փոխադարձ դիրքը, ինչպես նաև ուղիղ գծերի փոխադարձ դիրքը,
- ե. ցուցաբերում է պրոյեկցիաների երեք հարթությունների վրա հատվածի պրոյեկտման հմտություններ,
- զ. ցուցաբերում է պրոյեկցիաների երեք հարթությունների վրա հատվածի պրոյեկտման հմտություններ ,
- է. ճիշտ է որոշում կետի կոորդինատները,
- ը. ճիշտ է կարդում կոմպլեքսային գծագիրը,
- թ. ճիշտ է կառուցում երրորդ պրոյեկցիան` ըստ տրված երկուսի,
- ժ. ճիշտ է կառուցում պարզ երկրաչափական պատկերների պրոյեկցիաները հարթության վրա:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի անհատական առաջադրանք, որը բաղկացած կլինի հետևյալ խնդիրներից`

1. կատարել հատվածի պրոյեկտում պրոյեկցիաների երեք հարթությունների վրա,
2. որոշել տրված կետի կոորդինատները,
3. կառուցել երրորդ պրոյեկցիա ըստ տրված երկուսի,
4. կառուցել որևէ պարզ երկրաչափական պատկերի պրոյեկցիաներ հարթությունների վրա:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե առաջադրանքի առնվազն 3 կետերը կատարված են անսխալ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գծագրության պարագաներ, ցուցադրական նյութեր: Ցանկալի է

ուսուցումն իրականացնել համակարգչային գրաֆիկայի կաբինետում՝ համապատասխան համակարգչային ծրագրերով:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ներկայացնել աքսոնոմետրական պրոյեկցիաները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում աքսոնոմետրական պրոյեկցիաների նշանակությունը,
- բ. ճիշտ է ներկայացնում աքսոնոմետրական պրոյեկցիաների տեսակները,
- գ. ճիշտ է ներկայացնում առանցքների տեղակայումը և աղավաղման գործակիցները,
- դ. ճիշտ է կազմում կոորդինատային առանցքների, հարթ պատկերների և երկրաչափական մարմինների աքսոնոմետրական պատկերները,
- ե. ճիշտ է կառուցում էլիպսներին փոխարինող օվալները,
- զ. ճիշտ է պատկերում կանոնավոր հնգանկյունը պրոյեկցիաների երեք հարթություններում,
- է. ճիշտ է կազմում հարթ պատկերների կոմպլեքսային գծագիրը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի անհատական առաջադրանք, որը բաղկացած կլինի հետևյալ խնդիրներից՝

- 1. կառուցել տրված չափերով որևէ հարթ պատկերի աքսոնոմետրական պատկերները,
- 2. կառուցել տրված չափերով որևէ երկրաչափական մարմնի աքսոնոմետրական պատկերները,
- 3. կառուցել տրված չափերով էլիպսին փոխարինող օվալ,
- 4. կազմել տրված հարթ պատկերների կոմպլեքսային գծագիր:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե առաջադրանքի առնվազն 3 կետերը կատարված են անսխալ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՆԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գծագրության պարագաներ, ցուցադրական նյութեր: Ցանկալի է ուսուցումն իրականացնել համակարգչային գրաֆիկայի կաբինետում՝ համապատասխան համակարգչային ծրագրերով:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ներկայացնել երկրաչափական մարմինների հատույթները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է պատկերացնում հատույթի գաղափարը,
- բ. ճիշտ է նարկայացնում պրոյեկտող հարթություններով մարմինների հատումը,
- գ. ճիշտ է կառուցում հատույթի իրական պատկերը բնական մեծությամբ,
- դ. ճիշտ է պատկերում հատված երկրաչափական մասրմինների աքսոնոմետրիաները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի անհատական առաջադրանք, որը բաղկացած կլինի հետևյալ խնդիրներից`

- 1.կառուցել տրված չափերով որևէ հատված երկրաչափական մարմնի աքսոնոմետրիաները,
- 2.որոշել հատույթի իրական պատկերը բնական մեծությամբ:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե առաջադրանքը կատարված է ճիշտ`առանց էական թերությունների:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գծագրության պարագաներ, ցուցադրական նյութեր, հատված մարմինների մանրակերտ նմուշներ: Ցանկալի է ուսուցումն իրականացնել համակարգչային գրաֆիկայի կաբինետում` համապատասխան համակարգչային ծրագրերով:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում` 4 ժամ
- Գործնական պարապմունք` 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ներկայացնել շինարարական գծագրության տարրերը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է կառուցում հարկի հատակագիծն առանցքային ցանցում,
- բ. ճիշտ է տեղադրում հատակագծի չափերը,
- գ. ճիշտ է տեղադրում մակարդակի նիշերը,
- դ. ճիշտ է պատկերում հատակագծի վրա պատող կոնստրուկցիաները, դռները և պատուհանները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի անհատական առաջադրանք, որտեղ պատկերված կլինի որևէ բնակելի տան հատակագիծ, կնշվեն մասշտաբը և սխեմատիկորեն բացվածքները:

- Ուսանողը պետք է`
 - 1.կառուցի հատակագիծը առանցքային ցանցում,
 - 2.տեղադրի չափերը,
 - 3.պատկերի դռներն ու պատուհանները սահմանված պայմանական նշաններով:
- Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե առաջադրանքը կատարված է ճիշտ`առանց էական թերությունների:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, գծագրության պարագաներ, ցուցադրական նյութեր, ճարտարապետական սինեմատիկ հատակագծեր: Ցանկալի է ուսուցումն իրականացնել համակարգչային գրաֆիկայի կաբինետում՝ համապատասխան համակարգչային ծրագրերով:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական պարապմունք՝ 14 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՄԵԹՈՂՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ »

Մոդուլի դասիչը՝ ՇԿՇ 5-11 – 002

Մոդուլի նպատակը՝

Մոդուլը նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել կարողություններ և հմտություններ կոնստրուկցիաների ամրության և կոշտության հաշվարկների, ուժերի և մոմենտների էլյուրների գծման բնագավառում:

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ

Տեսական ուսուցում՝ 18 ժամ
Գործնական պարապմունք՝ 54 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՇԿՇ 5-11-001 « ճարտարագիտական գրաֆիկա: Պրոյեկցիաներ և հատույթներ» մոդուլը:

Ոսումնառության արդյունքները՝ Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք կարողանա՝

1. ներկայացնել բացարձակ պինդ մարմնի մեխանիկայի հիմունքները,
2. ներկայացնել բացարձակ առաձգական մարմնի մեխանիկայի հիմունքները,
3. ներկայացնել իրական մարմնի մեխանիկայի հիմունքները:

Գնահատման կարգը՝ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել բացարձակ պինդ մարմնի մեխանիկայի հիմունքները
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- ա. ճիշտ է ներկայացնում ուժը, կարող է պրոյեկտել այն առանցքի վրա,
- բ. ճիշտ է մեկնաբանում ստատիկայի պրոբլեմները,
- գ. ճիշտ է ներկայացնում ուժերի մոմենտը և ուժերի զույգը,
- դ. ճիշտ է դասակարգում ուժային համակարգերը,
- ե. ճիշտ է ներկայացնում զուգամետ ուժերի հարթ համակարգը,

- գ. ճիշտ է կիրառում կրոնշտեյններում, բարձակային ֆերմաներում, հեծանային և ծպեղային ֆերմաներում զուգամետ ուժերի հավասարակշռության բանաձևերը,
- է. ճիշտ է կիրառում պատահական դասավորված ուժերի հավասարակշռության բանաձևերը գործնական խնդիրներում,
- ը. ճիշտ է ներկայացնում հեծանները և հեծանային համակարգերը,
- թ. ճիշտ է ներկայացնում շրջանակները և շրջանակային համակարգերը,
- ժ. ճիշտ է ներկայացնում կամարները,
- ի. ճիշտ է ներկայացնում շփումը,
- լ. ճիշտ է ներկայացնում ծանրության կենտրոնը և իներցիայի մոմենտը,
- խ. ճիշտ է ներկայացնում պատահական դասավորված ուժերի տարածական համակարգը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի անհատական գրավոր առաջադրանք, որը բաղկացած կլինի թեսթից (առնվազն 10 տեսական հարց) և մեկ խնդրից, որը կպահանջի զուգամետ կամ պատահական դասավորված ուժերի հավասարակշռության բանաձևերի կիրառում: Թեսթի յուրաքանչյուր հարցին կհետևեն 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ տարբերակը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը ճիշտ է լուծել խնդիրը և ճիշտ պատասխանել թեսթի առնվազն 8 հարցին:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն: Հաշվարկներ կատարելու և աղյուսակներ, գրաֆիկներ կառուցելու ժամանակ անհրաժեշտ է կիրառել համապատասխան համակարգչային ծրագրեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում` 6 ժամ
- Գործնական պարապմունք` 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ներկայացնել բացարձակ առաձգական մարմնի մեխանիկայի հիմունքները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում բացարձակ առաձգական մարմնի մոդելը,
- բ. ճիշտ է բացատրում Հուկի օրենքը,
- գ. ճիշտ է բացատրում ձգման և ծռման դեֆորմացիաները,
- դ. ճիշտ է կիրառում ստատիկ որոշելի և ստատիկ անորոշ համակարգերում տեղափոխությունների որոշման բանաձևերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի անհատական գրավոր առաջադրանք, որը բաղկացած կլինի թեսթից (առնվազն 10 տեսական հարց) և մեկ խնդրից, որը կպահանջի ստատիկ որոշելի կամ անորոշ համակարգերում տեղափոխությունների որոշման բանաձևերի կիրառում: Թեսթի

յուրաքանչյուր հարցին կհետևեն 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ տարբերակը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը ճիշտ է լուծել խնդիրը և ճիշտ պատասխանել թեսթի առնվազն 8 հարցին:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն: Հաշվարկներ կատարելու և աղյուսակներ, գրաֆիկներ կառուցելու ժամանակ անհրաժեշտ է կիրառել համապատասխան համակարգչային ծրագրեր: Գործնական պարապմունքներն անցկացնել մասնագիտացված լաբորատորիայում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում` 6 ժամ
- Գործնական պարապմունք` 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ներկայացնել իրական մարմնի մեխանիկայի հիմունքները ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է սահմանում ամրությունը և լարումը,
- բ. ճիշտ է կատարում կենտրոնական ձգված տարրի հաշվարկը,
- գ. ճիշտ է կատարում կենտրոնական սեղմված տարրի հաշվարկը,
- դ. ճիշտ է կատարում ձգված տարրերի հաշվարկը,
- ե. ճիշտ է կատարում ոլորված ձողի ամրության հաշվարկը,
- զ. ճիշտ է կատարում հեծանների ամրության և կոշտության հաշվարկը,
- է. ճիշտ է տարբերում ուղիղ և թեք ծռումը,
- ը.ճիշտ է կատարում ապակենտրոն սեղմված ձողի ամրության և կոշտության հաշվարկը,
- թ.ճիշտ է մեկնաբանում գլոցվածքների չափերը և բնութագրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի անհատական գրավոր առաջադրանք, որը բաղկացած կլինի թեսթից (առնվազն 10 տեսական հարց) և մեկ խնդրից, որտեղ կպահանջվի կատարել ստորև բերված հաշվարկներից որևէ մեկը`

- 1.կենտրոնական ձգված կամ սեղմված տարրի հաշվարկ,
2. ձգված տարրերի հաշվարկ ,
3. հեծանների ամրության և կոշտության հաշվարկ ,
- 4.ապակենտրոն սեղմված ձողի ամրության և կոշտության հաշվարկ:

Թեսթի յուրաքանչյուր հարցին կհետևեն 3 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ուսանողը պետք է ընտրի ճիշտ տարբերակը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը ճիշտ է լուծել խնդիրը և ճիշտ պատասխանել թեսթի առնվազն 8 հարցին:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն: Հաշվարկներ կատարելու, աղյուսակներ և գրաֆիկներ կառուցելու ժամանակ անհրաժեշտ է կիրառել համապատասխան համակարգչային ծրագրեր: Գործնական պարապմունքներն՝ անցկացնել մասնագիտացված լաբորատորիայում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական պարապմունք՝ 30 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ »

Մոդուլի դասիչը՝ ՇԿՇ 5 -11 – 003

Մոդուլի նպատակը՝

Մոդուլը նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել կարողություններ և հմտություններ չափման տեխնիկայի, հաստատուն և փոփոխական հոսանքի էլեկտրական մեքենաների անվտանգ և արդյունավետ բանեցումն ապահովելու համար:

Մոդուլի տևողությունը՝ 90 ժամ

Տեսական ուսուցում՝ 42 ժամ
Գործնական պարապմունք՝ 36 ժամ
Լաբորատոր պարապմունք՝ 12 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԱԱՕ 5-11-001 « Անվտանգություն և առաջին օգնություն» և ՇԿՇ 5-11-001 « Ճարտարագիտական գրաֆիկա:Պրոյեկցիաներ և հատույթներ» մոդուլները:

Ուսումնառության արդյունքները՝ Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք կարողանա՝

1. բացատրել էլեկտրական և մագնիսական դաշտերի առաջացումը և բնութագրերը,
2. ներկայացնել հաստատուն հոսանքի շղթաների հիմնական հասկացությունները և հաշվարկել շղթաների պարամետրերը,
3. ներկայացնել փոփոխական հոսանքի շղթաների հիմնական հասկացությունները և հաշվարկել շղթաների պարամետրերը,
4. շղթաներում կատարել էլեկտրական չափումներ,
5. ներկայացնել էլեկտրական մեքենաների բնութագրերը,
6. ներկայացնել էլեկտրոնային սարքերի դերը շինարարությունում, կիսահաղորդիչ սարքերի դասակարգումը և բնութագրերը:

Գնահատման կարգը՝ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Բացատրել էլեկտրական և մագնիսական դաշտերի առաջացումը և բնութագրերը
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

- ա. ճիշտ է բացատրում էլեկտրական դաշտի առաջացումը,
- բ. ճիշտ է բացատրում մագնիսական դաշտի առաջացումը,
- գ. ճիշտ է ներկայացնում էլեկտրական և մագնիսական դաշտերի բնութագրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և թեսթային հանձնարարություն կատարելու հիման վրա: Հարց ու պատասխանի միջոցով ստուգվելու են էլեկտրական և մագնիսական դաշտերի մասին ընդհանուր գիտելիքները: Թեսթի միջոցով ուսանողին հանձնարարվելու է ըստ դաշտի տեսակի ընտրել նրա առաջացման հնարավոր պայմանները, յուրաքանչյուրի հիմնական բնութագրերը:

Ստորև ներկայացվում է.

ա/ էլեկտրական դաշտի առաջացման պայմանները և հիմնական բնութագրերը

- էլեկտրական լիցք,
- հոսանքի խտություն,
- հոսանքի ուժ,
- լարում,
- դիմադրություն,
- էլշու,
- էլեկտրական պոտենցիալ:

բ/ մագնիսական դաշտի առաջացման պայմանները և հիմնական բնութագրերը

- մագնիս,
- կոճ,
- էլեկտրական հոսանք,
- ինդուկցիա,
- լարվածություն,
- մագնիսական թափանցելիություն,
- մշու,
- մագնիսական պոտենցիալ,
- մագնիսական հոսք:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի ,եթե ուսանողը հարցերին ընդհանուր առմամբ պատասխանի ճիշտ: Թույլատրվում են որոշակի բացթողումներ և անճշտություններ: Թեսթային առաջադրանքը պետք է կատարվի առնվազն 70 տոկոս ճշտությամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և ցուցադրական նյութեր, դաշտերի պատկերների բաշխվածության համակարգչային ծրագրային նյութեր, համակարգիչ, թվային պրոյեկտոր, ըստ ցուցադրական

նյութի տեսակի այլ տեխնիկական միջոցներ: Հնարավորության դեպքում՝ ցանկալի է ուսուցումն իրականացնել կաբինետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ներկայացնել հաստատուն հոսանքի շղթաների հիմնական հասկացությունները և հաշվարկել շղթաների պարամետրերը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի շղթայի հիմնական հասկացությունները,
- բ. ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի շղթայի աշխատանքային ռեժիմները,
- գ. ճիշտ է հաշվում հաստատուն հոսանքի էլեկտրական շղթայի պարամետրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեսթային հանձնարարություն կատարելու և գործնական արդյունքի հիման վրա: Գործնական առաջադրանքի ընթացքում ուսանողին հանձնարարվելու է հաշվարկել հաստատուն հոսանքի շղթայի պարամետրերն ըստ հանձնարարված նախնական տվյալների: Առաջադրանքը պետք է հնարավորություն տա ստուգելու ուսանողի՝ ըստ շղթայի կառուցվածքի պարամետրերը հաշվարկելու առավել նպատակահարմար տարբերակն ընտրելու ունակությունը: Թեսթային հանձնարարության միջոցով ստուգվելու են էլեկտրական շղթաների և դրանց պարամետրերի մասին ընդհանուր գիտելիքները: Թեսթի յուրաքանչյուր հարցին կցվելու է երեք պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Ստորև ներկայացվում են թեսթի հարցերի հնարավոր թեմաները.

ա/ հաստատուն հոսանքի շղթայի հիմնական հասկացությունները և աշխատանքային ռեժիմները՝

- էլեկտրական շղթայի անվանական աշխատանքային ռեժիմ,
- պարապ ընթացքի ռեժիմ,
- կարճ միացման ռեժիմ,
- համաձայնեցված ռեժիմ,
- գծային տարր,
- ոչ գծային տարր, վոլտամպերային բնութագիր,
- էլեկտրական պոտենցիալ,
- հաստատուն հոսանքի ոչ գծային էլեկտրական շղթա:

բ/ հաստատուն հոսանքի շղթայի հաշվարկային պարամետրերն ու հաշվարկի համար անհրաժեշտ կախվածությունները՝

- ճյուղի հոսանք,
- կոնտուրի հոսանք,
- հոսանքի աղբյուր,
- գծային շղթա,
- ոչ գծային շղթա,

- Օհմ-ի օրենքը,
- Կիրխհովի առաջին օրենքը,
- Կիրխհովի երկրորդ օրենքը,
- կոնտուրային հոսանքների օրենքը,
- երկու հանգույցների մեթոդը:
- մշու,
- մագնիսական պոտենցիալ,
- մագնիսական հոսք,
- մագնիսական հաստատուն,
- մագնիսական շղթա:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի ,եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարել գործնական առաջադրանքը՝ առանց էական բացթողումների: Թեսթային առաջադրանքը պետք է կատարվի առնվազն 70 տոկոս ճշտությամբ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և ցուցադրական նյութեր, համակարգիչ, թվային պրոյեկտոր, ըստ ցուցադրական նյութի տեսակի այլ տեխնիկական միջոցներ: Հնարավորության դեպքում՝ ցանկալի է ուսուցումն իրականացնել կաբինետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 12 ժամ

Գործնական պարապմունք՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ներկայացնել փոփոխական հոսանքի շղթաների հիմնական հասկացությունները և հաշվարկել շղթաների պարամետրերը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների հիմնական հասկացությունները,
- բ. ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների աշխատանքային ռեժիմները,
- գ. ճիշտ է հաշվում փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների պարամետրերը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեսթային հանձնարարություն կատարելու և գործնական արդյունքի հիման վրա: Գործնական առաջադրանքի ընթացքում ուսանողին հանձնարարվելու է հաշվարկել փոփոխական հոսանքի շղթայի պարամետրերն ըստ հանձնարարված նախնական տվյալների: Առաջադրանքը պետք է հնարավորություն տա ստուգելու ուսանողի՝ ըստ շղթայի կառուցվածքի պարամետրերը հաշվարկելու առավել նպատակահարմար տարբերակն ընտրելու ունակությունը: Թեսթային հանձնարարության

միջոցով ստուգվելու են փոփոխական հոսանքի էլեկտրական շղթաների և դրանց պարամետրերի մասին ընդհանուր գիտելիքները: Թեսթի յուրաքանչյուր հարցին կցվելու է երեք պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Ստորև ներկայացվում են թեսթի հարցերի հնարավոր թեմաները.

ա/ փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների հիմնական հասկացությունները և աշխատանքային ռեժիմները

- ֆազա,
- անկյունային հաճախություն,
- ֆազային տեղաշարժ լարման և հոսանքի միջև,
- սինուսոիդալ հոսանքի միաֆազ էլեկտրական շղթա,
- սինուսոիդալ հոսանքի շղթայի հզորությունը,
- հզորության գործակից,
- ակտիվ, ինդուկտիվ և ունակային դիմադրություններ,
- էլշու –ի ակնթարթային, ամպլիտուդային և գործող արժեքներ,
- լարման ակնթարթային, ամպլիտուդային և գործող արժեքներ,
- հոսանքի ակնթարթային, ամպլիտուդային և գործող արժեքներ,
- ռեզոնանսային երևույթները փոփոխական հոսանքի շղթաներում,
- հաճախականության բնութագրեր,
- ոչ սինուսոիդալ հոսանքներ,
- ոչ սինուսոիդալ էլեկտրական մեծությունների գործող արժեքները,
- ոչ գծային տարրերով փոփոխական հոսանքի էլեկտրական շղթաներ,
- եռաֆազ հոսանքի էլեկտրական շղթաներ:

բ/ փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների հաշվարկներ

- կոմպլեքս էլեկտրական մեծություններ,
- Օհմի օրենքը կոմպլեքսային պարամետրերով,
- վեկտորական դիագրամա,
- Կիրխոֆի օրենքը կոմպլեքս պարամետրերի համար,
- փոփոխական հոսանքի չճյուղավորված շղթա,
- փոփոխական հոսանքի ճյուղավորված շղթա,
- ոչ սինուսոիդալ հոսանքի շղթաների հաշվարկը,
- սինուսոիդալ հոսանքի միաֆազ շղթայի հաշվարկը,
- սիմետրիկ եռաֆազ շղթայի հաշվարկը,
- ոչ սիմետրիկ եռաֆազ շղթայի հաշվարկը:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի ,եթե ուսանողը ընդհանուր առմամբ ճիշտ է կատարել գործնական առաջադրանքը` առանց էական բացթողումների: Թեսթային առաջադրանքը պետք է կատարվի առնվազն 70 տոկոս ճշտությամբ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և ցուցադրական նյութեր, համակարգիչ, թվային պրոյեկտոր, ըստ ցուցադրական նյութի տեսակի այլ տեխնիկական միջոցներ: Հնարավորության դեպքում՝ ցանկալի է ուսուցումն իրականացնել կաբինետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Շղթաներում կատարել էլեկտրական չափումներ

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է չափում հաստատուն հոսանքի շղթայի պարամետրերն ամբողջ շղթայում և դրա առանձին տեղամասերում,
- բ. ճիշտ է չափում փոփոխական հոսանքի շղթայի պարամետրերն ամբողջ շղթայում և դրա առանձին տեղամասերում,
- գ. ճիշտ է չափում մագնիսական մեծությունները,
- դ. ճիշտ է ներկայացնում շղթաներում անցումային պրոցեսների առաջացումը,
- ե. ճիշտ է ներկայացնում անցումային պրոցեսների գործնական կիրառման տեղը տարբեր շղթաներում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական առաջադրանքի հիման վրա: Գործնական առաջադրանքի ընթացքում ուսանողին հանձնարարվելու է չափումներ կատարելու էլեկտրական և մագնիսական 4-ից ոչ պակաս մեծությունների:

Ստորև ներկայացվում է.

ա/ հաստատուն և փոփոխական հոսանքի ամբողջ շղթայում և առանձին տեղամասերում չափվող պարամետրերը՝

- հոսանք,
- լարում
- ակտիվ, ինդուկտիվ, ուճական, ռեակտիվ դիմադրություն,
- հզորություն:

բ/ մագնիսական մեծությունների չափվող պարամետրերը՝

- մագնիսական հոսք,
- ինդուկցիա:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի ,եթե ուսանողն առաջադրանքը կատարի բացարձակ ճիշտ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, ցուցադրական նյութեր, չափիչ սարքեր, լաբորատոր

վարժասարքեր: Ուսուցումը պետք է իրականացնել լաբորատորիայում՝ առանձին կամ այլ լաբորատորիայի հետ համատեղված (օրինակ, կենսագործունեության անվտանգության):

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Լաբորատոր պարապմունք՝ 12 ժամ:

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Ներկայացնել էլեկտրական մեքենաների բնութագրերը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է դասակարգում էլեկտրաշարժաբերներն ըստ տեսակների,
- բ. ճիշտ է հաշվարկում շարժաբերային շարժիչի անհրաժեշտ հզորությունը և ընտրում այն,
- գ. ճիշտ է ներկայացնում շինարարական հրապարակի էլեկտրամատակարարման սկզբունքները,
- դ. ճիշտ է ներկայացնում ֆիզիկական երևույթները էլեկտրական մեքենաներում,
- ե. ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի մեքենաների կառուցվածքը և աշխատանքի սկզբունքը,
- զ. ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի մեքենաների կառուցվածքը և աշխատանքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով: Արդյունքի յուրացումը դրական կհամարվի ,եթե ուսանողն ճիշտ է պատասխանում հարցերին: Թույլատրվում են որոշակի բացթողումներ և անճշտություններ: Ուսանողի գործնական հմտությունները պետք է գնահատվեն պրակտիկայի ընթացքում՝ արտադրական պայմաններում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, ցուցադրական նյութեր, թեմատիկ տեսաֆիլմեր: Հնարավորության դեպքում՝ ցանկալի է ուսուցումն իրականացնել կաբինետային պայմաններում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Ներկայացնել էլեկտրոնային սարքերի դերը շինարարությունում , կիսահաղորդիչ սարքերի դասակարգումը և բնութագրումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում արդյունաբերական էլեկտրոնային սարքերի անհրաժեշտությունը և դերը շինարարությունում,
- բ. ճիշտ է դասակարգում կիսահաղորդիչ սարքերը,
- գ. ճիշտ է բացատրում P-N անցման առաջացումը և հատկությունները,
- դ. ճիշտ է բնութագրում ռեզիստորները և դիոդները,

ե. ճիշտ է ներկայացնում տիրիստորների կառուցվածքը և հատկությունները,
զ. ճիշտ է ներկայացնում տրանզիստորների բնութագիրը և սահմանային պարամետրերը,
է. ճիշտ պատկերացում ունի անալոգային, թվային և գիբրիդային ինտեգրալ միկրոսխեմաների մասին,

ը. ճիշտ է դասակարգում միկրոսխեմաներն ըստ գործառության նշանակության:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեսթային հանձնարարության և գործնական արդյունքի միջոցով: Թեսթի միջոցով ուսանողին հանձնարարվելու է ընտրել էլեկտրական ապարատներում օգտագործվող կիսահաղորդչային սարքերը, նրանց աշխատանքային բնութագրերը, ընտրել կիսահաղորդչային սարքի կիրառման տեղը շղթայում: Գործնական առաջադրանքով ուսանողին հանձնարարվելու է առաջադրված էլեկտրոնային սխեմայում կատարել միացումներ:

Արդյունքի յուրացումը դրական կհամարվի ,եթե թեսթային առաջադրանքը կատարվի առնվազն 80 տոկոս ճշտությամբ: Գործնական առաջադրանքը պետք է կատարվի բացարձակապես ճիշտ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքի ուսուցանումը կատարվում է տեսական և գործնական ուսուցման միջոցով: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական նյութեր, ցուցադրական նյութեր, համակարգիչ, թվային պրոյեկտոր, էլեկտրոնային սխեմաներ, կիսահաղորդչային սարքեր, էլեկտրական ապարատներ: Հնարավորության դեպքում՝ ցանկալի է ուսուցումն իրականացնել կաբինետային պայմաններում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ԻՐԵՐ»

Մոդուլի դասիչը՝ ՇԿՇ – 5 -11 – 004

Մոդուլի նպատակը՝

Մոդուլը նպատակն է ուսանողի մոտ ձևավորել շինարարական նյութերի և իրերի տեսակների, հատկությունների, մակնիշավորման սկզբունքների, կիրառելիության բնագավառների վերաբերյալ գիտելիքներ և դրանք օգտագործելու կարողություններ:

Մոդուլի տևողությունը՝ 108 ժամ

Տեսական ուսուցում՝ 42 ժամ

Լաբորատոր պարապմունք՝ 66 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:

Ոսումնառության արդյունքները՝ Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք կարողանա՝

1. ներկայացնել շինարարական նյութերի դասակարգումը, ներկայացվող տեխնիկաշահագործական պահանջները, կիրառության բնագավառը և հիմնական հատկությունները,
2. ներկայացնել բնական շինանյութերի և խեցեգործական նյութերի կառուցվածքը, տեսակները, ֆիզիկամեխանիկական հատկությունները, արատները, բնական շինանյութերից շինվածքները, դրանց տարատեսակները, կիրառելիության բնագավառը, ներկայացվող պահանջները,
3. ներկայացնել մետաղների և մետաղական իրերի ընդհանուր բնութագիրը, դասակարգումը, տարատեսակները, հատկությունները, կոռոզիան և պաշտպանումը նրանից, տեղափոխման և պահպանման կանոնները, կիրառության բնագավառը,
4. ներկայացնել կապակցանյութերի ընդհանուր բնութագիրը, որակի նկատմամբ տեխնիկական պահանջները, հատկությունները, պնդացումը, տեղափոխման, պահպանման կանոնները, կիրառելիության պահանջները,
5. ներկայացնել հանքային կապակցանյութերի հիման վրա պատրաստված արհեստական քարանյութերի և շինվածքների բնութագիրը, դասակարգումը, տեսակների անվանացանկը, բաղադրիչները և դրանց նկատմամբ ներկայացվող պահանջները, կազմի ընտրումը, հատկությունները, տեղափոխման և պահեստավորման կանոնները, կիրառության բնագավառը,
6. ներկայացնել մեկուսիչ նյութերի բնութագիրը, տեսակները, հատկությունները, գործածության ժամանակ դրանց նկատմամբ ներկայացվող պահանջները, կիրառության բնագավառը:

Գնահատման կարգը` Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել շինարարական նյութերի դասակարգումը, ներկայացվող տեխնիկաշահագործական պահանջները, կիրառության բնագավառը և հիմնական հատկությունները,

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում շինարարական նյութերի և իրերի նշանակությունը շինարարական աշխատանքների արդյունավետության բարձրացման գործընթացում, դրանց դասակարգումը, որակի նկատմամբ պահանջները,
- բ. ճիշտ է մեկնաբանում շինարարական նյութերի հիմնական հատկությունները,
- գ. ճիշտ է որոշում շինարարական նյութերի ֆիզիկամեխանիկական հատկությունները,
- դ. ճիշտ է մեկնաբանում շինարարական նյութերի կիրառելիության բնագավառը` ելնելով դրանց հիմնական հատկություններից և ներկայացվող տեխնիկաշահագործական պահանջներից:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական արդյունքի միջոցով: Սովորողին կտրվի կոնկրետ գործնական առաջադրանք, ըստ որի նա պետք է որոշի համձնարարված նյութի ֆիզիկամեխանիկական հատկությունները՝ իրական խտությունը, ծակոտկենությունը, ջրակլանումը, ամրությունը և այլն: Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվել է ճիշտ, կամ թույլատրելի շեղումներով: Հարց ու պատասխանի դեպքում՝ թույլատրելի են ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և լաբորատոր պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված լաբորատորիա՝ անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով: Տեսական ուսուցման համար անհրաժեշտ է ուսումնական և մեթոդական գրականություն, առաջարկելի է տեսաֆիլմերի, պլակատների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Անհրաժեշտ է պահպանել անվտանգության տեխնիկայի և սանիտարիայի կանոնները:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇՆԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 8 ժամ

Գործնական պարապմունք՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ներկայացնել բնական շինանյութերի և խեցեգործական նյութերի կառուցվածքը, տեսակները, ֆիզիկամեխանիկական հատկությունները, արատները, բնական շինանյութերից շինվածքները, դրանց տարատեսակները, կիրառելիության բնագավառը, ներկայացվող պահանջները ,

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում բնական շինանյութերի և խեցեգործական նյութերի կառուցվածքը, բնութագիրը, տեսակները, ֆիզիկամեխանիկական հատկությունները,
- բ. ճիշտ է որոշում բնական շինարարական նյութերի և խեցեգործական նյութերի որակը, տարբերում է արատները, ընտրում է բնական շինարարական նյութերի երկարակեցությունն ապահովող միջոցները,
- գ. ճիշտ է տարբերակում լեռնային ապարներն ըստ արտաքին տեսքի և բնութագրում դրանք,
- դ. ճիշտ է ներկայացնում բնական շինարարական նյութերից շինվածքները և խեցեգործական նյութերից շինվածքները, դրանց դասակարգումը, տարատեսակներն ու առանձնահատկությունները,
- ե. ճիշտ է գնահատում արտաքին զննմամբ խեցեգործական աղյուսի որակը և լաբորատոր փորձարկման միջոցով որոշում դրա ֆիզիկամեխանիկական հատկությունները,
- զ. ճիշտ է նկարագրում բնական շինարարական նյութերի, շինվածքների և խեցեգործական շինվածքների կիրառության բնագավառը՝ ելնելով հիմնական հատկություններից, տեխնիկատնտեսական պահանջներից,

է. ճիշտ է բացատրում բնական շինանյութերի, շինվածքների և խեցեգործական նյութերի, շինվածքների տեղափոխման և պահպանման կանոնները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական արդյունքի միջոցով: Սովորողին կտրվի կոնկրետ գործնական առաջադրանք, ըստ որի նա պետք է տարբերի լեռնային ապարներն ըստ արտաքին տեսքի և բնութագրի դրանք, լաբորատոր փորձարկման միջոցով որոշի հանձնարարված լեռնային ապարի կամ խեցեգործական շինվածքի ֆիզիկամեխանիկական հատկությունները:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվել է ճիշտ, կամ թույլատրելի շեղումներով: Հարց ու պատասխանի ժամանակ՝ թույլատրելի են ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և լաբորատոր պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված լաբորատորիա՝ անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով, լեռնային ապարների և խեցեգործական շինվածքների նմուշների հավաքածու: Տեսական ուսուցման համար անհրաժեշտ է ուսումնական և մեթոդական գրականություն, առաջարկելի է տեսաֆիլմերի, պլակատների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Անհրաժեշտ է պահպանել անվտանգության տեխնիկայի և սանիտարիայի կանոնները:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Լաբորատոր պարապմունք՝ 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ներկայացնել մետաղների և մետաղական իրերի ընդհանուր բնութագիրը, դասակարգումը, տարատեսակները, հատկությունները, կոռոզիան և պաշտպանումը նրանից, տեղափոխման և պահպանման կանոնները, կիրառության բնագավառը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում մետաղների ընդհանուր բնութագիրը և բացատրում մետաղների դասակարգումը,
- բ. ճիշտ է ներկայացնում պողպատը և թուջը որպես երկաթածխածնային հիմնական միացություններ, կառուցվածքային էությունը և բացատրում է դրանց դասակարգումը,
- գ. ճիշտ է բացատրում թուջի և պողպատի հատկությունները և մակնիշավորման սկզբունքները,
- դ. ճիշտ է կատարում մետաղների նմուշների կտրվածքով տարբերակումը, ճանաչում է թուջի և պողպատի տեսակները,
- ե. ճիշտ է ներկայացնում պողպատի, պողպատե կոնստրուկցիաների, պողպատե ամրանների տեսակները և այլ մետաղական շինվածքները,

գ. Ճիշտ է ներկայացնում շինարարությունում կիրառվող գունավոր մետաղների համաձուլվածքների դասակարգումը, ֆիզիկամեխանիկական հատկությունները, է. ճիշտ է մեկնաբանում մետաղների կոռոզիան և պաշտպանումը դրանից, ը. ճիշտ է բացատրում մետաղական շինվածքների տեղափոխման, պահպանման կանոնները և նկարագրում դրանց կիրառության բնագավառը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական արդյունքի միջոցով: Սովորողին կտրվի կոնկրետ գործնական առաջադրանք, ըստ որի նա պետք է տարբերակի պողպատը և թուջը ըստ հանձնարարված մետաղների կտրվածքների, ըստ արտաքին տեսքի տարբերակի հանձնարարված ամրանային նմուշների տեսակները և դասը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվել է ճիշտ, կամ թույլատրելի շեղումներով: Հարց ու պատասխանի դեպքում՝ թույլատրելի են ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և լաբորատոր պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված լաբորատորիա՝ անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով, մետաղների և ամրանների նմուշներով: Տեսական ուսուցման համար անհրաժեշտ է ուսումնական և մեթոդական գրականություն, ցանկալի է տեսաֆիլմերի, պլակատների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Անհրաժեշտ է պահպանել անվտանգության տեխնիկայի և սանիտարիայի կանոնները:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Լաբորատոր պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ներկայացնել կապակցանյութերի ընդհանուր բնութագիրը, որակի նկատմամբ տեխնիկական պահանջները, հատկությունները, պնդացումը, տեղափոխման, պահպանման կանոնները, կիրառելիության պահանջները,

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է նկարագրում կապակցանյութերի նշանակությունը շինարարությունում, առանձնահատկությունները և բացատրում դրանց դասակարգումը,

բ. ճիշտ է ներկայացնում հանքային կապակցանյութերը և բացատրում դրանց դասակարգումը,

գ. ճիշտ է բնութագրում օդային կապակցանյութերը, տեսակները, մեկնաբանում հիմնական հատկությունները, որակի նկատմամբ տեխնիկական պահանջները,

դ. ճիշտ է բնութագրում հիդրավլիկ կապակցանյութերը, տեսակները, մեկնաբանում հիմնական հատկությունները, որակի նկատմամբ տեխնիկական պահանջները,

- ե. ճիշտ է մեկնաբանում պորտլանդցեմենտի հանքաբանական կազմը և ներկայացնում ցեմենտի տարատեսակները,
- զ. ճիշտ է բացատրում հանքային կապակցանյութերի պնդացումը,
- է. ճիշտ է ներկայացնում ցեմենտաքարի կոռոզիան և պաշտպանումը դրանից,
- ը. ճիշտ է ներկայացնում մագնեզիական կապակցանյութերը և դրանց առանձնահատկությունները,
- թ. ճիշտ է տարբերակում հանքային կապակցանյութերի տեսակները և որոշում կրի տեսակը, մարման արագությունը, շինարարական գիպսի որակը, հանքային կապակցանյութերի կապակցման ժամկետները, գիպսախմորի և ցեմենտախմորի թանձրությունը լաբորատոր փորձարկումների միջոցով,
- ժ. ճիշտ է ներկայացնում բիտումային խայծղանային կապակցանյութերը, տեսակները, հիմնական հատկանիշները, ֆիզիկամեխանիկական հատկությունները,
- ի. ճիշտ է հրահանգավորում կապակցանյութերի փոխադրման և պահպանման կանոնները, կիրառելիության բնագավառը և ներկայացվող պահանջները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական արդյունքի միջոցով: Սովորողին կտրվի կոնկրետ գործնական առաջադրանք, ըստ որի նա պետք է կատարի հետևյալ հանձնարարություններից մեկը կամ մի քանիսը`

- որոշի կրի տեսակը և մարման արագությունը,
- գիպսախմորի կամ ցեմենտախմորի թանձրությունը,
- ցեմենտախմորից պատրաստի փորձարկման նմուշ,
- նախօրոք պատրաստված ցեմենտախմորից նմուշը ենթարկի փորձարկումների ըստ սեղմման և ծռման, որոշի ցեմենտի մակնիշը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվել է ճիշտ, կամ թույլատրելի շեղումներով: Հարց ու պատասխանի դեպքում` թույլատրելի են ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և լաբորատոր պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված լաբորատորիա` անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով, այդ թվում տարատեսակ կապակցանյութերով: Տեսական ուսուցման համար անհրաժեշտ է ուսումնական և մեթոդական գրականություն, ցանկալի է տեսաֆիլմերի, պլակատների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Անհրաժեշտ է պահպանել անվտանգության տեխնիկայի և սանիտարիայի կանոնները:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

- Տեսական ուսուցում` 6 ժամ
- Լաբորատոր պարապմունք` 14 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Ներկայացնել հանքային կապակցանյութերի հիման վրա պատրաստված արհեստական քարանյութերի և շինվածքների բնութագիրը, դասակարգումը, տեսակների անվանացանկը, բաղադրիչները և դրանց նկատմամբ ներկայացվող պահանջները, կազմի ընտրումը, հատկությունները, տեղափոխման և պահեստավորման կանոնները, կիրառության բնագավառը,

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է բնութագրում արհեստական քարանյութերը և ներկայացնում դրանց նութագրումը,
- բ. ճիշտ է ներկայացնում բետոնը, դրա նշանակությունը, դասակարգումը և ըստ բաղադրիչների պահանջները,
- գ. ճիշտ է մեկնաբանում բետոնային, շաղախային խառնուրդների հատկությունները,
- դ. ճիշտ է ընտրում բետոնային և շաղախային խառնուրդների կազմը բացարձակ ծավալների մեթոդով և որոշում խառնուրդների շարժունականությունը,
- ե. ճիշտ է ներկայացնում բետոնի և շաղախի տեսակները, հատկությունները, պնդացումը, առանձնահատկությունները և ներկայացնում որակի հսկման մեթոդները,
- զ. ճիշտ է որոշում բետոնի և շաղախի ամրության սահմանը, լցանյութերի որակը լաբորատոր փորձարկումների միջոցով և համեմատում է տարբեր տեսակի բետոնների, շաղախների տեխնիկատնտեսական ցուցանիշները,
- է. ճիշտ է վերահսկում բետոնային և շաղախային խառնուրդների տեղափոխման գործընթացը և ներկայացնում է դրանց տեղադրումն ու խտացումը,
- ը. ճիշտ է ներկայացնում բետոնե և երկաթբետոնե շինվածքները, կոնստրուկցիաները , դասակարգումը և դրանց նկատմամբ պահանջները,
- թ. ճիշտ է ներկայացնում բետոնե և երկաթբետոնե շինվածքների, կոնստրուկցիաների անվանացանկը, դրանց նշանակությունը, պնդացումը, տեխնիկատնտեսական ցուցանիշները, կիրառման արդյունավետությունը,
- ժ. ճիշտ է տարբերակում երկաթբետոնե շինվածքները, կոնստրուկցիաները և բացատրում դրանց նշանակությունը,
- ի. ճիշտ է իրականացնում՝ ելնելով երկաթբետոնե շինվածքների և կոնստրուկցիաների մակնիշից , շինարարական հրապարակ մտնող երկաթբետոնե շինվածքի որակի հսկումը,
- լ. ճիշտ է ներկայացնում բետոնե և երկաթբետոնե շինվածքների, կոնստրուկցիաների տեղափոխման, պահեստավորման գործընթացը և կիրառության բնագավառը,
- խ. ճիշտ է ներկայացնում սիլիկատային նյութերը և շինվածքները, դրանց նշանակությունը, տեսակները, առանձնահատկությունները, ներկայացվող պահանջները,
- ծ. ճիշտ է ներկայացնում գիպսի տեսակները և գիպսաբետոնե նյութերը, շինվածքները, դրանց նշանակությունը, առանձնահատկությունները, ներկայացվող պահանջները,
- կ. ճիշտ է նկարագրում սիլիկատային, գիպսաբետոնային շինվածքների տեղափոխման և պահեստավորման գործընթացը, կիրառության բնագավառը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի և գործնական արդյունքի միջոցով: Սովորողին կտրվի կոնկրետ գործնական առաջադրանք, ըստ որի նա պետք է կատարի հետևյալ հանձնարարություններից մեկը կամ մի քանիսը՝

- պատրաստի առաջադրված կազմի շաղախային խառնուրդ և որոշի նրա շարժունակությունը,
- պատրաստի առաջադրված կազմի բետոնային խառնուրդ և որոշի նրա շարժունակությունը,
- լաբորատոր փորձարկումների միջոցով որոշի բետոնի հանձնարարված լցանյութերի որակի գնահատում,
- կատարի հանձնարարված դասի ծանր բետոնի կազմի հաշվարկ:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե գործնական առաջադրանքը կատարվել է ճիշտ, կամ թույլատրելի շեղումներով: Հարց ու պատասխանի դեպքում՝ թույլատրելի են ոչ էական բացթողումներ և անճշտություններ:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՇՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և լաբորատոր պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված լաբորատորիա՝ անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով, այդ թվում տարատեսակ կապակցանյութերով, լցանյութերով: Տեսական ուսուցման համար անհրաժեշտ է ուսումնական և մեթոդական գրականություն, առաջարկելի է տեսաֆիլմերի, պլակատների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Անհրաժեշտ է պահպանել անվտանգության տեխնիկայի և սանիտարիայի կանոնները:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 10 ժամ

Լաբորատոր պարապմունք՝ 18 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Ներկայացնել մեկուսիչ նյութերի բնութագիրը, տեսակները, հատկությունները, գործածության ժամանակ դրանց նկատմամբ ներկայացվող պահանջները, կիրառության բնագավառը

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ա. ճիշտ է ներկայացնում ջրամեկուսիչ, ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ և հերմետիկացնող նյութերի բնութագիրը, դասակարգումն ըստ ձևի ու կառուցվածքի, թվարկում է անվանացանկը, առանձնահատկությունները, տեխնիկատնտեսական ցուցանիշները,

բ. ճիշտ է ներկայացնում պոլիմերների հիման վրա պատրաստված շինարարական նյութերի և շինվածքների նշանակությունը, բաղադրիչները, տեսակները, հիմնական հատկությունները, ներկայացվող պահանջները,

գ. ճիշտ է ներկայացնում լաքաներկային նյութերի նշանակությունը, տեսակները, բաղադրությունները, հիմնական հատկությունները, ներկայացվող պահանջները,
դ. ճիշտ է նկարագրում մեկուսիչ նյութերի տեղափոխման ,պահպանման գործընթացը, գործածության նկատմամբ դրանց ներկայացվող պահանջները, կիրառության բնագավառը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է թեսթային առաջադրանքի միջոցով (առնվազն 20 հարց՝ յուրաքանչյուրին կցված 3 պատասխաններով, որոնցից միայն մեկն է ճիշտ):

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթային առաջադրանքը կատարված է 80 տոկոսի ճշտությամբ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ ջրամեկուսիչ, ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ, լաքաներկային և հերմետիկացնող նյութերի նմուշներ ցուցադրելու համար, ուսումնական գրականություն, ցանկալի է տեսաֆիլմերի, պլակատների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Անհրաժեշտ է պահպանել անվտանգության տեխնիկայի և սանիտարիայի կանոնները:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

Մոդուլի դասիչը՝ ՇԿՇ – 5 -11 – 005

Մոդուլի նպատակը՝

Մոդուլը նպատակն է ուսանողի մոտ ձևավորել կարողություններ և հմտություններ՝ հետազննական աշխատանքներին մասնակցելու, երկրաբանական կտրվածքներ կարդալու, շինարարական հրապարակի երկրաբանական կառուցվածքի վերաբերյալ տվյալները գործնականում կիրառելու համար:

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ

Տեսական ուսուցում՝ 48 ժամ

Գործնական պարապմունք՝ 24 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՇԿՇ 5-11-001 «Ճարտարագիտական գրաֆիկա: Պրոյեկցիաներ և հատույթներ» մոդուլը:

Ուսումնառության արդյունքները՝ Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք կարողանա՝

1. ներկայացնել ճարտարագիտական երկրաբանության հիմունքները,
2. ներկայացնել հանքաբանության հիմունքները,
3. ներկայացնել ստորերկրյա ջրերի ազդեցությունը շինարարական արտադրության վրա,

4. ներկայացնել երկրաբանական գործընթացները,

5. աշխատել երկրաբանական քարտեզների և կտրվածքների հետ:

Գնահատման կարգը՝ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

**ԱՐԴՅՈՒՆՔ 1. Ներկայացնել ճարտարագիտական երկրաբանության հիմունքները
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

ա. ճիշտ է ներկայացնում ճարտարագիտական երկրաբանության դերը շինարարական արտադրությունում,

բ. ճիշտ է ներկայացնում երկրաբանական միջավայրի ձևավորումը և երկրաբանության ու շինարարության կապը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը պատասխանել է բոլոր հարցերին՝ առանց էական բացթողումների և անճշտությունների:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված կաբինետ, ուսումնական գրականություն, առաջարկելի է տեսաֆիլմերի, պլակատների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 2. Ներկայացնել հանքաբանության հիմունքները
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

ա. ճիշտ է սահմանում հանքաբանությունը,

բ. ճիշտ է ներկայացնում հրային լեռնային ապարների ձևավորումը, բերում է օրինակներ,

դ. ճիշտ է ներկայացնում փոխակերպային (մետամորֆային) լեռնային ապարների ձևավորումը, բերում է օրինակներ,

ե. ճիշտ է ներկայացնում նստվածքային ապարների առաջացումը, բերում է օրինակներ,

զ. ճիշտ է ներկայացնում լեռնային ապարը որպես շինարարական արտադրության արտադրամիջոց:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը պատասխանել է բոլոր հարցերին՝ առանց էական բացթողումների և անճշտությունների:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված կաբինետ, ուսումնական գրականություն, առաջարկելի է տեսաֆիլմերի, պլակատների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Ներկայացնել ստորերկրյա ջրերի ազդեցությունը շինարարական արտադրության վրա

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է տարբերում գրունտային ջրերի տեսակները,
- բ. ճիշտ է որոշում ջրաթափանցելիության և ներծծման (ֆիլտրացիայի) գործակիցները տարբեր եղանակներով,
- դ.ճիշտ է ներկայացնում ցամաքուրդը

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը պատասխանել է բոլոր հարցերին` առանց էական բացթողումների և անճշտությունների:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված կաբինետ, ուսումնական գրականություն, առաջարկելի է տեսաֆիլմերի, պլակատների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ներկայացնել երկրաբանական գործընթացները

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է դասակարգում երկրաբանական գործընթացները,
- բ. ճիշտ է տարբերակում արտաքին երկրաբանական գործընթացները,
- գ. ճիշտ է ներկայացնում քամու երկրաբանական գործունեությունը,
- դ. ճիշտ է ներկայացնում հոսող ջրի երկրաբանական գործունեությունը,
- ե. ճիշտ է ներկայացնում ստորերկրյա ջրերի երկրաբանական գործունեությունը,
- զ. ճիշտ է ներկայացնում կենդանի օրգանիզմների երկրաբանական գործունեությունը,
- է. ճիշտ է ներկայացնում երկրաբանական գործընթացների ազդեցությունը շինարարական միջավայրի վրա:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը պատասխանել է բոլոր հարցերին` առանց էական բացթողումների և անճշտությունների:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում անհրժեշտ է ունենալ մասնագիտացված կաբինետ, ուսումնական գրականություն, առաջարկելի է տեսաֆիլմերի, պլակատների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 18 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Աշխատել երկրաբանական քարտեզների և կտրվածքների հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է կարդում երկրաբանական կտրվածքները և քարտեզները,
- բ. ճիշտ է կազմում երկրաբանական կտրվածքների սխեմաները,
- գ. ճիշտ է ներկայացնում ճարտարագիտաերկրաբանական հետազննական աշխատանքների մասնակցության հիմնական պահանջները,
- դ. ճիշտ է կատարում երկրաբանական հետազննությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվության մշակման աշխատանքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու գործնական արդյունքի միջոցով: Ուսանողին կտրվեն երկրաբանական կտրվածքներ ու քարտեզներ որևէ կոնկրետ տեղամասի վերաբերյալ և կառաջադրվի մեկնաբանել դրանք և կազմել հակիրճ հաշվետվություն:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը ճիշտ է կատարել հաշվետվության մշակումը` առանց էական բացթողումների:

ՍԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտացված կաբինետ, ուսումնական գրականություն, օրինակելի երկրաբանական քարտեզներ և կտրվածքներ, երկրաբանական հաշվետվությունների օրինակներ: Առաջարկելի է տեսաֆիլմերի, պլակատների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով: Գործնական հմտություններն անհրաժեշտ է ձևավորել նաև պրակտիկայի ընթացքում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 6 ժամ,

Գործնական պարապմունքներ` 24 ժամ:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ (ԵՐԿՐԱԲԱՇԽԱԿԱՆ) ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ»

Մոդուլի դասիչը` ՇԿՇ – 5 -11 – 006

Մոդուլի նպատակը`

Մոդուլը նպատակն է սովորողներին տալ գիտելիքներ հարթության վրա երկրագնդի ֆիզիկական մակերևույթի պատկերման, չափագրման և հաշվարկման սկզբունքային մոտեցումների մասին, ինչը նրանց կօգնի տիրապետել շինարարական աշխատանքների

իրականացման ժամանակակից արդյունավետ մեթոդներին՝ դրսևորելով մասնագիտական որակյալ կարողություններ:

Մոդուլի տևողությունը՝ 72 ժամ

Տեսական ուսուցում՝ 24 ժամ

Գործնական պարապմունք՝ 48 ժամ

Մուտքային պահանջները՝ Այս մոդուլն ուսումնասիրելու համար մուտքային պահանջներ պետք չեն:

Ոսումնառության արդյունքները՝ Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք ցուցաբերի՝

1. գեոդեզիայի ուսումնասիրման առարկայի և խնդիրների իմացություն,
2. երկրագնդի մակերևույթի վրա կատարվող պարզագույն հանույթների իմացություն,
3. թեոդոլիտի կառուցվածքի, աշխատանքային սկզբունքների և թեոդոլիտային հանույթի առաջնահերթությունների իմացություն,
4. տախիոմետրի և կիպրեզելի կառուցվածքի, դրանց աշխատանքային սկզբունքների, ինչպես նաև տախիոմետրական ու մենզուլային հանույթների առաջնահերթությունների իմացություն,
5. նիվելիրացման աշխատանքների էության, նիվելիրների կառուցվածքի, դրանց աշխատանքային սկզբունքների և նիվելիրային հանույթի իմացություն:

Գնահատման կարգը՝ Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Գեոդեզիայի ուսումնասիրման առարկայի և խնդիրների իմացություն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում գեոդեզիայի ուսումնասիրման առարկան,
- բ. ճիշտ է ներկայացնում գեոդեզիայի ժամանակակից խնդիրները,
- գ. ճիշտ է ներկայացնում գեոդեզիական աշխատանքներում կիրառվող գործիքները ու սարքավորումները,
- դ. ճիշտ է մեկնաբանում գեոդեզիայի դերն ու նշանակությունը հողաշինարարական աշխատանքներում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի միջոցով:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը պատասխանել է բոլոր հարցերին՝ առանց էական բացթողումների և անճշտությունների:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում անհրաժեշտ գործիքներով և սարքավորումներով /թեոդոլիտ, նիվելիր, կիպրեզել, տախիոմետր և այլն/, քարտեզներով և ալեքսոտոհանույթներով օժտված մասնագիտացված կաբինետում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական

գրականություն, առաջարկելի է տեսաֆիլմերի, պլակատների ցուցադրումը համակարգչով կամ թվային պրոյեկտորով:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Երկրագնդի մակերևույթի վրա կատարվող պարզագույն հանույթների իմացություն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ցուցադրում երկրաչափագրական գործիքները և օգտվում դրանցից,
- բ. ճիշտ է ցուցադրում երկրաչափագրական սարքավորումները և օգտվում դրանցից,
- գ. ճիշտ է կատարում տեղանքի պարզագույն տեղագրական հանույթը,
- դ. ճիշտ է կատարում տեղանքի պարզագույն դաշտային հանույթը,
- ե. ճիշտ է կատարում տեղանքի բուսոլային հանույթը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է անհատական գործնական առաջադրանքի միջոցով, որի կատարման ժամանակ ուսանողին հանձնարարվելու է կատարել կոնկրետ տեղանքի տեղագրական, դաշտային, բուսոլային հանույթներ (առաջարկելի է գործնական առաջադրանքի խմբակային իրականացում):

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե ուսանողը գործնական առաջադրանքը կատարել է թույլատրելի շեղումներով:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Տեսական ուսուցումն իրականացվելու է մասնագիտացված կաբինետում, գործնական պարապմունքները՝ առավելապես բացօթյա պայմաններում: Անհրաժեշտ է ունենալ ուսումնական և մեթոդական գրականություն, երկրաչափագրական գործիքներ և սարքավորումներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Թեոդոլիտի կառուցվածքի, աշխատանքային սկզբունքների և թեոդոլիտային հանույթի առաջնահերթությունների իմացություն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

- ա. ճիշտ է ներկայացնում թեոդոլիտի աշխատանքային մասերը,
- բ. ճիշտ է ներկայացնում թեոդոլիտից օգտվելու կարգը,
- գ. ճիշտ է կատարում թեոդոլիտային հաշվարկները,
- դ. ճիշտ է բացատրում թեոդոլիտի դերը չափագրական տարաբնույթ աշխատանքներում,
- ե. ճիշտ է ներկայացնում թեոդոլիտային հանույթի հաջորդական քայլերը,
- զ. ճիշտ է կատարում հորիզոնական հեռավորությունների և անկյունների չափագրումը,

է. ճիշտ է կատարում ուղղաձիգ հեռավորությունների և անկյունների չափագրումը,
ը.ճիշտ է ներկայացնում գեոդեզիական ուղիղ և հակադարձ խնդիրների լուծման
եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

